

ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ

ԱԶԹԱՑԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՔՈՒՐԴԻՍԱՆ

Ներու մի առանձին գրքուկով հրատարակեցինք մենք Էլիզէ Ռէկլիւից
երեք հատուած։ Առուսական Հայաստան կամ Արաքսի Աւաղանը, Աւրմիա
լիճ և Առաջաւոր Ասիա¹⁾։ Այժմն նոյն Էլիզէի բազմահատոր «Նոր Ընդ-
հանուր Աշխարհագրութեան» ֆրանսերէն բնագրի VI և IX հատորներից
քաղելով մեզ հայերիս և մեր գրացի ազգերին վերաբերեալ միւս մասերը՝
այնչափով, որչափով որ մենք այդ յարմար համարեցինք, հետզհետէ
յանձնելու ենք տպագրութեան Արարատի միջոցով։ Թէև խոստացել էինք
այս մեր թարգմանութիւնը ուղարկել Թիֆլիզի հայերէն գրքերի Հրատա-
րակչական Ընկերութեանը, բայց աչքի առաջ ունենալով Արարատի բազ-
մաժիւ բաժանորդների շահը, որոշեցինք փոխել մեր մտադրութիւնը,
յուսալով որ այս մեր թարգմանական աշխատութիւնը անհետաքրքրական
չի լինի և Արարատի ընթերցողների համար։ Մանաւանդ որ այսպիսով
աւելի ընդարձակօրէն ծառայած կլինինք նոյն նպատակին, ինչ նպատակի որ
նուիրուած է յիշեալ Հրատարակչական Ընկերութիւնը։

Էլիզէի ահագին գիտնական գործը, որի XVII դ հատորն արգէն դուրս է
եկել և գեռ չէ ամբողջացած, հազիւ թէ երբ և իցէ ամբողջութեամբ
թարգմանուի հայերէն, ուստի և՝ գոնէ քչից չզրկուելու համար, յանձն
առանք մենք այս աշխատութիւնը։ Տեղտեղ պատահող փոքրիկ անձնու-
թիւնները, որոնք և անխուսափելի են որևէ այսպիսի մեծ ծառալով գիտ-
նական աշխատութեան մէջ, այնչափ աննշան են Էլիզէի միւս առաւելու-
թիւնների հետ համեմատած։ որ ընթերցողը՝ մօտիկից ծանօթ լինելով
իւր հայրենիքին, եթէ ունենայ ել աւելի ճիշտ տեղեկութիւններ զանա-
զան մանրամասնութեանց վերաբերեալ այսուամենայնիւ արժէ որ կարգայ
այս գրուածքը, որի մէջ կգտնի, յայս ունիմ, նորութիւններ և միանգամայն
սրանով կծանօթանայ եւրոպական գիտնական աշխարհի՝ մեր, մեր հայրե-
նիքի և մեր գրացի ազգերի մասին ունեցած գաղափարների և հասկացո-
ղութեանց հետ։

ՄԻԱԲԱՆ.

1) Էջմիածին, Մայր Աթոռի տպար, գի՞ն 30 կոպ։

ինչպէս Եւրոպական Թուրքիան, նոյնպէս և Առաջաւոր Ասիայի այն մասը, որ կառավարւում է Կոստանդնուպոլսի սուլթանից՝ է մի անդամատուած քաղաքական աշխարհ, կայսրութեան մի մը-նացորդ, որի շատ տեղերը կիսով չափ են միայն պատկանում իրեն և այն իրեւ թէ թոյլտութեամբ Եւրոպական մեծ տէրու-թիւնների: Նորերս Ռուսիան հիւսիս-արևելքում ուղղեց սահմանը իւր օգտին, տիրելով ջրբաժան կատարների ռազմագիտական կէ-տերին: Առաջուց կարելի է նշանակել այն ճանապարհները, որով նրա բանակները իջնելու են գէպի Եփրատ և գէպի Հայկական և Քրդական գաւառները, որն և միացնելու է իւր միւս տիրապե-տածներին: Անգլիան՝ առանց կարողանալու արգիլել այս քաղա-քական փոփոխութիւնները և անխոհեմաբար միջամտած լինելով Թուրքիայի ասիական նահանգների պաշտպանութեան յահճնա-ռութեամբ 1, իւր բաժինը կամեցաւ առնել աւարից և տիրեց Կիպ-րոս կղզուն, որտեղից կարող է նա գոնէ հսկել պատահարներին: Մինչև անգամ ծովափի Յոյները՝ Սամոսի փոքրիկ իշխանութեան հաստատութեամբ Գրան պաշտօնական գերիշխանութեան ներքոյ, սկսել են Օսմանցիներից երկիրների յետ պահանջման գործը:

Աւո մինչգեռ սահմաններում և ծովափիներում թուրքական ասիական կայսրութիւնը վտանգուած է իւր ամբողջութեան մէջ թէ օտարներից և թէ իւր հպատակներից, որոնք ձեռք են բե-րում նորից իրենց իրաւունքները, ներքուստ էլ կորցնում է նա իւր յարակցութիւնը ցեղերի և գասակարգերի վէճերով և ընդ-հարումներով: Վանդւում է ճակատը և ամբողջ շինութիւնը ներ-սից ճաքճաքւում է: Յոյն և թուրք, Լազ, Քուրդ, Հայ, Մառոնի, Գրուգ և Անսարի շարժւում են սցնպէս, կարծես թէ նրանց մի-աւորող քաղաքական կասերը շուտով պէտք է իրզուին: Շատ երկիրներ, որոնք նշանակուած են քարտէսներում իրեւ փաղի-շահին պատկանող, բնակուած են իրապէս անկախ ցեղերով: Միւս կողմից՝ անապատ և ամայացած տարածութիւններ բաժանում են միմեանցից կայսրութեան նահանգները: Հարաւային կողմում պէտք է ամբողջ օրեր անցնել ամայութիւնների միջով՝ Այրանանի մշակուած հովիտներից Եփրատի ափերն համնելու համար: Հռով-

մայեցիների ժամանակներից սկսած՝ անմշակ տարածութիւնները աւելի էլ ընդարձակուել են: Պալմիրի և ուրիշ քաղաքների շուրջը երեւում են միմիայն թափառականների վրանները, օձերն են սոզում տաճարների խախտուած քարերի մէջ: Թէև ոչ մի ճշգրիտ վիճակադրութիւն չկայ հաւաստիքար հաստատելու համար 1), սակայն ճանապարհորդների մեծագոյն մասը համաձայն են, որ մեր օրով էլ բնակիչների թիւը պակասում է: Այս գարի կիսից սկսած՝ գիւղերը մասամբ զրկուել են իրենց բնակիչներից, շատ գաւառներում սովոր պատճառով, ուրիշ տեղեր՝ պանդխտութեան և բռնոր մուսուլման երկիրներում՝ յաճախ զինուորագրութեան պատճառով: Զինուորների մեծագոյն մասին վիճակուած է այլ ևս բնաւշեսնել իրենց ծննդավայրը:

Յարմար է ուրիմն առանձին առանձին խօսել Ասիական թուրքիայի բոլոր այն երկիրների մասին, որոնք մի որոշ ուրոյնութիւն ունին իրենց աշխարհագրական սահմաններով, իրենց պատմութեամբ կամ բնակիչների ծագումով, առանց ուշք գարձնելու պաշտօնական վարչական բաժանումներին: Վանի պարփակեալ աւազանը, Քուրդիստանի և Հայաստանի լեռնային շեղջակոյտները, Անդրկովկասի և Վերին Եփրատի միջև, կազմում են այս բնական ինքնուրոյն աշխարհներից մէկը: Միջագետքի դաշտը, ուր կազմակերպուեցին զօրեղ տէրութիւններ և կանգնեցան համբաւառ քաղաքներ, է նոյնպէս այն երկիրներից, որ ունեցել են յատուկ պատմական զարգացում, և կազմում է լաւ սահմանաւորուած աշխարհագրական մի ամբողջութիւն: Նոյնպէս է և Փոքր-Ասիայի թերակղզին, որի ծովափը՝ շրջապատուած կղզիներով և կղզեակներով, տարածում է իւր մշակութեան և գիւղերի յարմարաւոր աշագին գոտին սարահարթի շուրջը: մինչդեռ սարահարթը նուազ է բնակիչներով և մասամբ էլ ծածկուած է ազտաղատուկներով

1) Թուրքական Ասիայի տարածութիւնը և բնակիչները, Սամսու և Կիպրոս կղզիների հետ միասին, մօտաւորական թուերով ըստ Բէմի և Աագների. տարածութիւն. 1900000 քառ. քիլոմետր. բնակիչների հաւանական թիւ. 16350000 իւրաքանչ քիլոմ. վրայ. 9 բնակիչ.

(աղային գաշտերով): Կիպրոսը, որ այժմն Մեծ-Քրիտանիայի լիթ-խարի տէրութեան մասն է կազմում, պէտք է նոյնպէս ուսում-նասիրուի առանձին. իւր պատմութեամբն էլ նա ինքնուրոյն նշա-նակութիւն է ունեցել իրեւ միջնորդ Փիւնիկէի և Յունաստանի միջև: Վերջապէս՝ Ասորիքն ու Պաղեստինը, այդ երկայնաձիգ լեռ-նային աշխարհը, որի մի կողմը փակում են Միջերկրականի ջրերը, միւս կողմը՝ անապատի աւազները, է մի աշխարհագրական ամ-բողջութիւն: Աշխարհի սրատմութեան մէջ այս երկիրի բնակչիները մեծ մասն և ազդեցութիւն են ունեցել իրենց գիւտերով, գաղա-փարների փոխանակութեամբ և փոխանցմամբ: Խոկ ինչ վերաբե-րում է Արաքիայի ծովափում Թուրքիայի ունեցած կալուածնե-րին, այդ պէտք է ուսումնասիրել Արաքիա թերակղզու հետ միա-սին, որի և մասն են կազմում նրանք:

ՊՈՆՏՈՍԻ ՇՈՎԱՓԸ, ՎԱՆ ԼՃԻ ԵՒ ՎԵՐԻՆ ԵՓՐԱՏԻ
ԱԻԱԶԱՆՆԵՐԸ:

Եթէ Ասիական Թուրքիայի այժմեան քաղաքական սահմանա-գծերը չեն համապատասխանում բնական սահմաններին, գոնէ-անկիւնի սահմանագլուխը՝ որ բաժանում է երեք պետութիւն՝ ոռւսաց Յառի, պարսից Շահի և օսմանցիների Սուլթանի երկիր-ները, ամենայաջող ընտրուածն է՝ որ է Մասիս սարը (2): Երեք պե-տութիւնների սահմանագիծը անցնում է Մասիսի լեծ և Փոքր կոների լերանցամէջքով: Այս կէտից սկսած Թուրքիայի քաղաքա-կան սահմանն անցնում է 150 քիլոմետր երկայնութեամբ գէպի արևմուտք՝ Արաքսի և Նիբրատի աւաղանների ջրբաժան գծով: Հարկաւ ամենքն էլ գիտեն, որ այս առժամանակեայ սահման է: Այս երկում ամեն ուղղութեամբ շրջող ճանապարհորդների մէջ ուռւսների թիւը ստակառ չէ, սակայն նրանց քարտէզները և ու-րուագծերը մեծ մասամբ նուիրուած են սպայապետութեան ուազ-մագիտական ուսումնասիրութեան. Խոկ եթէ գատենք անցեալ սպատերազմների յիշատակով — պէտք է ենթադրել որ երկու տէ-րութեանց ընդհարումները վերջանալու են նոր տիրապետու-

թեամբ: Ելքրուտը կարող է կրկնել թանգուրակ սարին, բիւրակնեանին (Բինգէօլ - դաղ), Արգէռո լեռանը, ինչ որ նա երբեմն ասում էր կազբէկին Կերմնտուիի բերանով. «Դողան ես տեսնում եմ հեռուն, մշշապատ հիւսիսում, մի ինչ-որ, որ լաւ բանի նշան չէ: Ուռալից մինչև Դանուբ բանակները շարժւում են. թնդանօդների շարքերը՝ պղնձապատ կազերով, յառաջ են շարժւում չարագուշակ դղրգիւնով, ծխող պատրոյգները պատրաստում են պատերազմների համար: »

Մասիսից արեւմուտք՝ Հրաբխային կոնուսներով ծածեռած մի լեռնագօտի, որի գագաթները շատ քիչ բարձր են շղթայից, իւր գահավիշ պարսպով սահմանափակում է Էջմիածնի կամաչագեղ գաշտերը: Մի քանի գագաթներ միայն, ինչպէս օրինակ՝ Զինգիլ, Փեռլի-դաղ և լու, անցնում են 3000 մետր բարձրութիւնից, որ անում է 1500 մետր բարձր գաշտավայրից: Այս մանուածապատ լեռնաշղթան՝ ձգուելով դէպի արեւմուտք, յետոյ դէպի հարաւ—արեւմուտք, ատիճանաբար ցածանում է, մինչդեռ իւր ստորոտում փռուած Արաքսի հովիտը բարձրանում է հետզետէ: Գետերի ակունքների մօտ այս լեռնաշղթան նորից բարձրանում է և ուրիշ ծայրաբոլոր (convergent) շղթաների հետ կազմում է բիւրակնեանը—Բինգէօլը—«Հաղար լճով սարը» (3752 մետր), որի ձմեռնային և գարնանային ձիւները սնունդ են տալիս ամեն կողմ հօսող ջրերին. արեւելքում՝ Արաքսին, հիւսիսում՝ և հարաւում՝ Եփրատի երկու գլխաւոր ճիւղերին, որ են Արածանի (Մուրագ) և Աւ-ջուր (Ղարա-սու):

Բիւրակնեան հանգոյցի այն կողմը՝ լեռնային բնագաւառը, որի գլխաւոր շղթան զուգահեռական է Աւ-ջուրի ափին, շարունակւում է դէպի արեւմուտք 250 քիլոմետր և ցածանալով գարեւանգից գարեւանդ՝ վերջապէս անցը է տալիս Աւ-ջրին, որը յանկարծակի ծռուելով դէպի հարաւ—արեւելք միանում է Եփրատի միւս ճիւղին:

Մի բարձր գագաթ, որ ձգուած է դէպի հիւսիս միայնում է Բիւրակնեան լեռնակոյտը կը զրումի սարերին և Աւ ջրի առաջին վտակների ժողովուած կրկէսի արեւելքում կազմում է մի մա-

նուածապատ և բազմախոռոչ ջրբաժան լեռնակատար: Այդ տեղումն է անցնում կրպում—կարսի ռազմագիտական մեծ ճանապարհը: Փականթէօքանը, որ գտնուում է կրպումից ուղղակի հարաւ, ջրբաժան գծով պարփակուած այդ լայնածաւալ շրջանի ամենաբարձր գագաթն է (3145 մետր): Բայց՝ աւելի գէպի արևմուտք՝ Եռլի-գաղի կողմնական լեռնագօտին, որ շրջապատում է Սև ջրի առաջին մեծ պոտուալ, ունի աւելի բարձր կատարներ: Կրպումի աւազանից հիւսիս՝ մի ուրիշ շատ բարձր լեռնակոյտ—Գեաւուր-գաղը կամ «Անհաւատների սարը» մի այլ լեռնահանգոյց է կազմում, որն և Բիւրակնեանի նման ջրերի ճառագայթաձև բաժանման կենդրոն է: Այս լեռնահանգոյցի հիւսիսային զառի վայրերիցն է իջնում Թորթում—գետը և ուռչելով բազմաթիւ վտակներից՝ կազմում է մի հիանալի ջրբնկէց, մինը «Հին Աշխարհի ամենասիրուն» ջրբնկէցներից: Թորթում—գետը զիմելով գէպի ձորոխը, որը թափուում է Սև ծովը, սուզուում է անդընդախոր իիրճերում, որոնց լաւայի պատերը 300 մետր¹⁾ բարձրութիւն ունին: Հարաւ—արևելքում հեղեղատները պատկանում են կասպիական աւազանին, Արաքս և Կուր գետերով: Հարաւում՝ Դումի - դաղի՝ որ Անհաւատների լեռան հանդիպագօտին է, զառիսիսյրերից բղիսում և Նիփրատի մայր - ակը, 2570 մետր ծովի մակերեւոյթից բարձր: Երասու գնում է և թափուում Պարսի ծոյը: Գրեթէ բոլոր մեծ աղբերակները կազմակերպուում են կրային լեռների խոռոչներում, իսկ Նիփրատի ակը ծնում է պորտիկուրների և խառաբարերի (դրտիստ) մէջ²⁾: Պաղ, գրեթէ սառցային ջուրը (3⁰,3), որ գուրս է ցայտում ժայռի բացուածքից, նշանաւոր է հայկական տւանդութիւններում: Այդ առաս աղբիւրի բղիսած ակում է պահուած եղել «իսկական խաչափայտը» Կոստանդնուպոլիս տեղափոխուելուց առաջ: Այն բոսկէին երբ խաչափայտը հանեցին հողից՝ բայ աւանդութեան, յատակ ջրի երակը գուրս ցայտեց: Շրջակայ մարգագե-

1) Hamilton, Researches in Asia Minor.

2) Moritz Wagner, Reise nach dem Ararat und dem Hochlande Armenien.

տիններից բղխում են ուրիշ քսան աղբիւր, աւելացնելով իրենց առուակները գլխաւոր վտակին: Թուրքերն անդամ մեծարում են Եփրատի ակունքը և ասում են որ նրա ջուրը սրբում է սովորական մեղքերը, սակայն սպանում է այն մարդկանց, որոնց հալածում է Ալլահի բարկութիւնը¹⁾: Միանալով ուրիշ վտակների հետ, որոնցից մէկը իւր ջրի քանակութեամբ հաւասարուում է Եփրատին, սուրբ ջուրը իշնում է Երզրումի գաշտը, ուր գարնանը ձների հալոցի ժամանակ փռւում է Հայնածաւալ Աազի (Աազիկ) ճաշիճներում, որոնք ծածկուած են եղեգնաբոյոերով և լիբն են սագերով, վայրի բագերով և ուրիշ ջրային թռչուններով: Դուրս գալով այս ճաշիճներից՝ Եփրատի պղտոր ջուրը ընթանում է գանդաղութեամբ աղմաւու հունով և արժանանում է իրաւամբ Ակջուր—Կարասու անուանը, որ տաղիս են նրան Թուրքերը, շատ հաւանական է որ Աազի ճաշիճները մնացորդ են մի նախկին լճի, որ երբեմն ծածկում էր Երզրումի գաշտը, սակայն Աազդէն չկարողացաւ գտնել այգտեղ լճային ժժմակների և ոչ մի տեսակ, չնայած իւր երկարաւու խուղարկութիւններին²⁾: Բուսական մնացորդները, որոնք կազմել են գաշտի երեսին սեահողի մի հաստ շերտ և հրաբխային մասրի շեղջերը՝ գուրս ժայթքելով հրաբուխներից, նախկին լճի անակը ծածկել են:

Երզրումի նախնական լճի գաշտը պարփակող լեռները մեծ մասսմբ հրային ծագումն ունին և շատ տեղեր արաւեանների վրայ երեւում են հրաբխային լեռաքարի ամենականոնաւոր կոնուսները բայց լաւայի հոսանքները հազուագիւտ են: Այս բանում այստեղի հրաբուխները չեն կարող համեմատուել արևելեան Հայաստանի հրաբխներին՝ Արարատին, Թանդուրակին, Սիմանին և մանաւանդ Արագածին, որի լաւայի ծածկոյթը ունի 150 քիլոմետր շրջագիծ: Երզրումին շատ մօտիկ, գաշտի հարաւային մասը շրջապատող լեռների մօտ, բարձրանում է մի հրաբուխ, որի բաժակը երբեմն

1) Strecker, Zeitschrift der Gesellschaft für Erdkunde, vol. IV.

2) Извѣстія Кавказскаго Отдѣла т. V, 1878.

լցուած է եղել ջրով, բայց հեղանիսթի ճնշումից փուլ է եկել բաժակի հիւսիսային կողը և կազմուել է մի խոր ձոր դէպի հիւսիս՝ Առ ջրի ճահիճների ուղղութեամբ։ Այս հրաբուխներից ամենաբարձրը և ամենանշանաւորը իւր գեղեցիկ կոնաձեռւթեամբ, որ յիշեցնում է Վեղուիլը, է Ահշիկը, որ էրզումի հիւսիս—արեմլուքումն է բարձրանում՝ գեաւուր—դաղի լեռնաշղթայում, և ունի 1100 մետր գաշտից և 3184 մետր ձ. մ. բարձրութիւն։ Կա ամբողջապէս կազմուած է շարժուն մոխրից, որն և շատ գեուարակուս է։ Բաժակի մէջ, որ շատ տեղի մեծ է քան թէ Վեղուիի այժմեան խառնարանը (բաժակը), բարձրանում է հրաբիսային չեշաբարի մի կոնուս, գորշ ու սև մի զանգուած, շրջապատուած օղակաձեւ մարգագետնով, որ գարնանը ծածկւում է ծաղիկներով։ Լաւ սլաշտապանուած հիւսիսի քամիներից, որ ուշացնում և աղքատայնում են շրջակայ լեռնակառարների բուսականութիւնը, Ահշիկի բաժակի արտաքին սլատերի և կեղրոնական կոնուսի մէջ տարածուող օղակաձեւ գաշտագետինը ունի մի բուսականութիւն, որ ամենահարուսան է տեսակներով և ամենափայլունը գոյներով այդ ամբողջ գաւառում¹⁾։

Շղթայաձեւ լեռներ, որոնց գլխաւոր ուղղութիւնը գուգահեռական է Առ ծովի եղերքին, հիւսիսից ուղեկցում են Առ ջրի հովտին, ձգուելով դէպի արեմուտք և անհետանալով Աերաստիայի (Արտազ) սարահարթում։ Բազմաթիւ կատարներ, որոնցից իւրաքանչիւրը առանձին անուն ունի, բարձրանում են այս լեռնաշղթայի վրայ։ Հները Պարիադրէս (Պարիսար) էին անուանում, իսկ այժմն այս շղթան յայտնի է Կոսկ-գաղ ընդհանուր անուամբ, առնուած մի գագաթից (3300 մետր), որի շրջապտոյտն է անում արեելքից և հիւսիսից՝ էրզում—Տրապիզոնի կառքերի ճանապարհը։ Լեռնանցքը, որով անցնում է այս ճանապարհը, 2700 մետր բարձրութիւն ունի ծովի մակերեւոյթից, գրեթէ հաւասար Ատիլի՛ին՝ կեղրոնական Ալպերում։ Եւ այս ճանապարհը ամենանշանաւորն է իբրև ճարտարագետական գործ ամբողջ Թուր-

1) Moritz Wagner, արգէն յիշուած։

քիայում։ Հիւսիսում բացւում է ձորոխի հովիտը, որ Քարշուտի կամ Գիւմիշ-խանէի գետի հովտի հետ կազմում է մի զարմանալի կանոնաւոր կիսաշրջանաձև գոգաւորութիւն։ Բաժումի նաւահանգատից, որի մօտ ձորոխը թափւում է ՍԿ ծովը, մինչեւ Տրիալի, որ գտնւում է Քարշուտի գետաբերանում, կարելի է անցնել ինչպէս մի ընդարձակ պողոտայով, որի երկու կողմը շարուած են սրածայր գագաթներ։ Մի լեռանցամէջք կայ միայն 1900 մետր բարձրութեամբ, Այս գետերի ընթացքով պարփակուած լայնարձակ կիսաշրջանը բռնուած է մի կարգ բարձր սարերով՝ Պոնտատական Ալպերով, որոնց մի գագաթը, Ախղէի հարաւ—արևելքում՝ Խաչքարը, անցնում է 3600 մետրից։ Մերձակայ մի լեռնանցք ունի 3268 մետր բարձրութիւն՝ ըստ Կոխի։ Լաղիստանի այս գաւառում՝ կածանները տարին վեց ամիս փակւում են ձիւնով. «թռչուններն անգամ, ասում են ընթիները, ձմեռը յեն կարող անցնել սարի վրայով⁴⁾»։ Քարշուտից արևմուտք՝ ծովափով գէպի Կիղիլ—Իրմաք ձգուող լեռները այնքան բարձր չեն որչափ Պոնտական Ալպերը՝ այսուամենայնիւ նրանք բաւական բարձր են հաղորդակցութիւնը մի կողմից գէպի միւսը գժուարացնելու համար և տեղ տեղ էլ դէպի ծովը արձակում են բարձր սարաւանգներ, կտրատելով ծովափի գաշտը։ Այս բնական սահմանակէտերից մէկն է Եազուն—Բուռունը, որ է «Յասոնի հրուանդանը»։ Այս ժայռը կրում է գեռ մինչեւ սյսօր առասպելական նաւազի անունը, որ իւր նաւը վարեց գէպի խորհրդաւոր Կողքիս։ Պոնտական Ալպերի վերին հովիաններում երեւում են բազմաթիւ հետքեր նախկին սոսոցարանների, քայքայուած և ակօսացած քարակարկառների և սեպացած քերծերի։ Հրահոսանքները, պորփիւրն ու այլ տեսակ հրաբխային ժայռերն են կազմում այս լեռները և այն լեռները՝ որոնք ձգւում են Քարշուտից արևմուտք գէպի Գերմիլի կամ նախկին Գայլ գետը (Կիկոսը) և որոնք ակօսածե պատառուածներ են կրւեմ, որ գահավիժող սոսոցա-

4) Strecker, արդէն յիշուած։

բաններից մնացած չեռքեր են: Այս ամբողջ լեռնագաւառում՝ հրաբխային գործնէութիւնը տեղի է ունեցել՝ ինչպէս երեսում է, սառցային շրջանից առաջ: Ստորերկրեայ կրակեաղերի արտաքին միակ նշաններն են յաճախակի երկրաշարժը և բազմաթիւ ջերմուկներ, որոնք բղխում են լեռների ստորոտներում, նաև կողերի վրայ ¹⁾: Ըստ Ստրեկերի՝ Կոլատ—դաղի գագաթը (2900 մետր), որ բարձրանում է գլխաւոր շղթայի կատարի վրայ՝ Տրաբիզոնից 50 քիլոմետր դէպի հարաւ, պիտի լինի Թէքէս լեռու, որտեղից Քանչնոցնի առաջնորդած բիւրը տեսան վերջապէս ծովը և ողջունեցին նրան ուրախութեան ազաղակներով՝ իբրև. վախճան իրենց նեղութիւնների: Բայց այս արտեանը դիւրամասունի չէ մի ամբողջ բանակի համար, որ ունի իւր բեռներն և պաշարի սայլերը և հիւսիսային կողմից էլ Կոլատ—դաղի էջքը անհնարին է: Հներից այնչափ յաճախ յիշուած վայրը, որտեղից յոյները տեսան իրենց ուսքի տակ կանաչագեղ ծովափունքը և ջրերի սասպիրն տարածութիւնը, պէտք է որոնել ծովից աւելի մօտիկ, մի լեռնանցքում, որտեղով ձգուելիս լինի մի ճանապարհ կամ շատիդ: Ոակայն Կոլատ—դաղից ցած՝ վաւուգ լերանցամէջքից հարաւ, բոլորուին մօտ այն ճանապարհին որով անցնելու էին յոյները կայ մի սար 2400 մետր բարձրութեամբ ծ. մ., որի գագաթից կատարելապէս երեսում է ծովը և որի ամենաբարձր արտեանի վրայ կանգնեցրած է պորփիւրի քարակարկառ՝ մօտ տասը մետք բարձրութեամբ և շրջապատուած քարաշեղջով՝ ծայրակտուր (յապաւած) կոնուսի ձևով: Պարոն Բոիօն (Briot), որ գտաւ այս յիշատակարանը, համարում է նրան յոյներից կանգնեցրած յուշարձան և արտեանը՝ որի վրայ բարձրանում է սա, լինելու է Թէքէս սարը ²⁾):

Հայկական Ալպերի կամ Անտի-Կոմիկասի անսահման լարիբինժոսը, որ բռնում է անդրկոմիկասեան Կուրի, Աւ ծովի և վերին Եփրատի միջև եղած բոլոր աշխարհը, տարածում է նաև Արարատից հարաւ և հարաւ—արեմուտք՝ Վան լճի ընդարձակ ջրաւա-

1) Palgrave, Essays on Eastern Questions.

2) Briot, Ճեռագիր:

զանի վրայ և նրա շուրջը, մինչև պարսկական սահմանը: Այս երկիրների գետինը ամենայն տեղ շատ բարձր է: Փերլի—գաղից հարաւ՝ սարաւանդի մի գոգաւորութեան մէջ ամփոփում է մի լիճ Բալիղ—գեօլ կամ «Զիների լիճ» (Գայլառու ծովակ կամ Գայլոսոյ լիճ), որի բարձրութիւնը ծ. Մ. 2237 մետրից պակաս չէ: Զինի աւելցուկը մի վտակով թափում է Արաքսի օժանդակներից մինի մէջ: Արածանին (Մուրագ) կամ Հարաւային Նվաստը որ հոսում է այս լճային լեռնագաշտի հարաւում՝ անցնում է 2000 մետր բարձրութեան վրայ մի առավար հովտով, որ սեղմուած է հրահոսանքների ավախաների մէջ: Այս լաւայի հոսանքը իջած է մերձակայ հրաբխային բաժակներից և խոռոշներից: Երկ ապառաժներն ու քերծերը, սրածոցը գագաթների պատառուածքներն ու վլուածքները այս քարքարուտ ամայութիւններին տալիս են մի վայրենի, ահարկու կերպարանք: Հիւսիսում բարձրանում է հղոր Արարատի զանգուածը՝ ու ժայռերով և ձիւնի շերտերով, հարաւում ձգւում է մի աւելի ցած լեռնագօտի, ահեղ զառիվայրերով:

Ալա-գաղը կամ «Խայտարդէտ գագաթը»⁽¹⁾ որտեղից բղխում են Եփրատի ամենաբարձր ակերը, հասնում է 3518 մետրի (3): Աւելի հպարտ է ուղիղ արևելքում՝ բարձրացող Թանգուրակի գագաթը, որ իւր ձուաձեւ խառնարանի ամենաբարձր կէտում ունի 3565 մետր բարձրութիւն: Հայկական բոլոր հրաբուխներից Թանգուրակը (Թօնդրիկ) կամ Թանգուրլուն նախկին գործնէութեան ամենաշատ հետքեր պահպանած սարն է: Թանգուրակ նշանակում է «Հնոց» (Թօնիր, Թօնդրակ, Թնդիր), որ անուանելում է նաև Առնդերլիկ - գաղ կամ «կրակարան - լեաւն» և ուռւաց առաջին քարտէզների վրայ նշանակուած է «Խուր» կամ «Խորի» անունով: Գլխաւոր խառնարանը, որ մի ահագին խոռոշ է 2000 մետր շրջապատով և 350 մետր խորութեամբ, չունի այլ ես ոչ հրահոսանք, ոչ գոլորշի, և մի փոքրիկ լճակի ջրերն են պապղում վհի յատակում,

(1) Այս անունով սարերը շատ բազմաթիւ են թըքախօս երկրներում և Դոկ Ալահ-գաղ նշանակում է «Աստուածային լեաւն»:

մինչդեռ մի հարիւր մետրի չափ աւելի ցածում՝ լեռան ձեղքուածք-ներից ծուխ է գուրս ժայթքում։ Հարաւային կողի վրայ կայ մի այր, որտեղից գոլորշիներ են բարձրանում 100 աստիճան տաքութեամբ (հարիւրաստիճանեան ջերմաչափի), բայց ծծմբային չեն։ Այսի յատակից շարունակ լուռում է մոնիւն։ Ոնզրկովկասեան պատերազմներից մինի ժամանակ ոռւսները և թուրքերը, որ բանակուած էին միմեանց մօտիկ՝ թանդուրակի մի հանդիպագոտու երկու հակագիր կողերի վրայ, կարծեցին լոել հեռաւոր թնդանօդաձգութիւն և երկու բանակումն էլ տագնապի նշանը տուին։ Թանգուրակի հիւսիս—արևմտեան ոտքում՝ քարայրից, գլխաւոր խառնարանից և մի ուրիշ երկրորդական վիժման բաժակից անցնող տուանցքի շարունակութեան վրայ գուրս են ցայտում Դիագինի առաւարուխ ծծմբային ջերմաւկները, ծածկելով գետինը իրենց կրային ծեփով, որ լինում է զանազան ձեւի և գոյնի։ Այս ջրերից կազմում է մի ջերմկային վտակ, որ շոգելից ջրընկէցներով թափւում է Արածանու պազ ջրերին մէջ։¹⁾ 1859-ին գլխաւոր աղբիւրը աւելի ցածումն էր, բայց մի ուժգին ցնցումն, որ շարժեց երկիրը մինչև էրզրում, ցամաքապրեց այդ աղբիւրը, սակայն ջրերը բացին իրենց համար նոր ճանապարհ։ Եւ այսպիսի յաճախակի փոփոխութիւններ պէտք է որ յառաջ գան աղբերակների շրջափառում, իբրև հետեւանք կեղեւի թանձրացման, որ մեծ արագութեամբ կերպարանափոխում է երկրի մակերեւոյթը։ Տայլորը տեսաւ բազմաթիւ փոքրիկ գէյսէրներ (շատրուան), որ նետուում էին հողից 2—3 մետր բարձր և յանկարծակի նորից կորչում, կարծես ուրուականների պար լինէր²⁾։ Մի բանի տարի յետոյ Արիխը չգտաւ այլ ևս այս ընդհատուող ջրի ցայտումները³⁾։ Զերմուկներից ներքեւ Արածանին անհետանում է բազալտ քարի ներքնուղու մէջ, որ մի խորին պատառուածք է, երկու ուղղահայեաց հանդիպակաց ափափաների միջև։

1) Jaubert, Voyage en Arménie.

2) Mittheilungen von Petermann, 1869, XI.

3) Записки Кавказского отделья, 1873.

Թանգուրակիլ խոտորագնաց լեռնագօտիների մի հանգոյց է։ Արանից դէպի հիւսիս-արևմուտք ձգւում է մի ողնաձև ճիւղ և միանում է Փերլի-դաղի հետ։ այսուեղով է անցնում ձանապարհը կրզրամից դէպի Թաւրիգ։ Ըստ ինքեան այս լեռնացին ողնաշարը պիտի լինէր Թուրքիայի և Պարսկաստանի սահմանը, սակայն արեւելեան բարձր հովիտը, ուր գտնւում է բալիդ-լիճը և որտեղից դուրս է գալիս նոյնանուն հեղեղատը, յատկացրած է Օսմանեան պետութեան։ Թանգուրակից դէպի արևելք անընդմիջապէս սկսուող լեռնաշղթան, դէմ առ դէմ Արարատի երկու գագաթներին, իւր ամբողջութեամբ մի բնական սահմանագիծ է և շնորհիւ անկախ քրդերի, որ բունած են նրա երկու կողերն էլ մնում է աղաս գրակից երկու պետութիւններից։ Արևելեան կողերի վրայ ձգւում են դէպի Աւրմիա լիճը փոքրիկ և կարծ գոտիներ, որոնք վերջանուում են յանկարծօրէն՝ սարաւանդներով, մինչդեռ արևմտքում՝ դէպի Վան լիճը, բազմաթիւ հանդիպագօտիներ են ձգւում հեռու հեռու և գնուում կորչում են սարահարժուում, որի միջին բարձրութիւնը չ. Մ. 2000 մետր է։ Լեռնաշղթան ինքն էլ հազիւ 3000 մետրի է հասնում իւր մի քանի սրածայր գագաթներովը։ Հաքարի լեռների ողնաշարը, որ հարաւում բոլորուում է վան լճի հարաւային ափին ուղեկցելու համար, երեսում է որ աւելի բարձր գագաթներ չպիտի ունենայ, թէ և ըստ Մոռից վագնէրի և Ռիխի պիտի գտնուին այնտեղ «սառցարաններ», այսինքն է՝ հաւանականաբար՝ ամրադած ձիւնի շերտեր խորածորերի յատակում։ Հիւսիսում և հիւսիս-արևմոգում մի ուրիշ բարձրութիւն լրացնում է լեռների և բարձր երկիրների շրջանը, որ պարփակում է լճային գոգաւորութիւնը և որի արաւեանի վրայ կանգնած է մի հին հրաբուխ՝ Աէյրան կամ Ախիան, 3600 մետր բարձրութեամբ ըստ ֆանսհաւ Տողերի, որն և ծածկուած է ձիւնավ տարին տասն ամիս։ Վինելով առանձնացած, սպիտակ կոնաձև գագաթով, կապտագոյն սիուցաձև արտափայլութեամբ՝ այս հրաբուխը թւում է աւելի մեծ քան թէ ուրիշ բազմաթիւ աւելի բարձր լեռներ, բայց որոնք գտնուում են լեռնակոյտների մէջ ուրիշ գագաթների մոտ։ Նիլը (Shiel) համեմատում էր սրան Դըմտէնդի հետ և նոյն բարձրութիւնն էր տալիս երկու

հրաբուխներին, որոնք սակայն տարբերում են միմեանցից առնուազն 2500 մետրով: Ոիփանն համարուել է նաև Արարատի ախոյեան և աւանդութիւնը պատմում է, որ երբ ջրհեղեղի ջրերը իջան՝ նախ և առաջ վարեցին Նոյեան տապանը Ոիփանի վրայ, յետոյ բերելով նրան գեղի հիւսիս՝ վերջնականապէս հանգչեցրին նրան Մասիսի վրայ: Հնումը հայերը բերում էին Ոիփանի խառնարանի եզրը մի ամքիծ ոչխար՝ մատաղ անելու¹⁾): Ամենալերին խառնարանը, որ 150 մետր խորութիւն ունի և ձմեռը ձիւնոյ է լեցուն, ամառը ծաղիկներով, երբեմն էլ ամիսիում է իւր մէջ մի վոքրիկ լճակ, շրջապատուած է սպիտակագոյն չեղաքարի կանգուն ժայռերով: Որս այս գագաթնակէտերից, որոնք պարապում են խառնարանը, կարելի է տեսնել հիւսիսում Հայաստանի լեռների անսահման հորիզոնը, որ ձգւում է կամարաձև 300 քիլոմետր երկարութեամբ Բիւրակնեանից մինչև Մասիս: Հարաւում երեւում է կողմնական խառնարանը, որ լցուած է Աղիր-գէօլով, այն է՝ «անշարժ (ծանր) լճով»: Աւելի հեռուն սփռուած է Վան լճի աւազանը՝ իւր խորշերով, ծոյերով, լիճը երկարաձգող ճախճախուսներով, և լեռների ամիսիթէատրոնը, որ շրջապատում է նրան: Հրաբիի ստորոտում՝ տարածուած է վոքրիկ Նաղիկ լիճը, որ քաղցր ջրի աւազան է՝ զետեղուած Վան լճի և Եփրատի ջրբաժան բարձրութեանց վրայ, և որը գէպի երկուսն էլ ուղարկում է, գոնէ անձրեային եղանակին, մի մի վտակ²⁾): Հարաւ արեւմոքում՝ մշուշը միախառնուում է գաշտերի անորոշ գծագրութեան հետ: Հայաստանի բարձրաւանդակութեան վերջին աստիճանները սպառուում են Միջագետքի գաշտերի վերեւում՝ ատամնաւոր քարաժայրերի մի շարքով, գետերից և հեղեղառներից վորսիորուած խորխորառներով, բայց որը իւր ամբողջութեամբ ունի մի կանոնաւոր ուղղութիւն հարաւ-արեւելքից գէպի հիւսիս-արեւմուտք, իբրև շարունակութիւն Լոռիսանի եղերական լեռնաշղթայի: Լճից գէպի արեւմուտք հեմբուգ

1) M. Wagner, արդէն յիշուած:

2) Layard, Nineveh and Babylon.—Millingen, Wild Life among of Koords.

սարբ, որ գրեթե ամբողջապէս բազկացած է մօխրից, գէտի ջրերն է հակում իւր տհագին խառնարանը, որի լայնութիւնը ասում են որ շատ քիլոմետրերի է հաւասար¹⁾: Խոկ հարաւային լճափում երեւում է մի թերատաձև (էլիպտաձև) նեղաբերան ծովախորշ, որ մասամբ խորասուզուած հրաբխի խառնարանն է: Ամբողջ բարձր Հայաստանը մի հրաբխային երկիր է, յաճախակի երկրաշարժներով գլոգուած: Զերմուկներն այնտեղ աւելի բազմաթիւ են քան թէ Արեմուտքի ամենահարուստ լեռներում, ինչպէս օրինակ՝ Պիրենէում և Պիէրնում:

Վանի լիճը՝ Հայերի Տոսպը, — որից և Թոսպիտիս անունը՝ որ տալիս էին նրան նախնիք, — 336 մետր աւելի բարձր է քան թէ Աւրմիայինը, իսկ ծովի մակերեւոյթից բարձրութիւնն է 1625 մետր: Ծառալը հաշուած է 3690 քառակուսի քիլոմետր, որ փոքր ինչ պակաս է Ատրապատականի ծովի (Աւրմիայի) տարածութիւնից, բայց անհամեմատ աւելի խորն է²⁾: Վանից 3 քիլոմետր դէպի արևմտաք խորազափը հասնում է յատակին 25 մետրից աւելի խորութեամբ³⁾, իսկ աւազանի հարաւային մասում յատակը գեռ աւելի էլ խոր է: Վան լճի ամբողջ բովանդակութիւնը անկասկած աւելի մեծ է քան Աւրմիայինը: Խոկ ինչ վերաբերում է Հիւսիսային-արեւելեան ծովախորշին, որ ձգւում է 60 քիլոմետր երկարութեամբ գէտի երկիր ներսը, դա մի ծանծաղուտ է, ուր գարնանը հեղեղները սիկահողի (ալիւխոն) ընդարձակ գելտաներ են կազմում: Բայ տեղական աւանդութեան՝ այս խորշը մի ժամանակ եղել է բերրի հավիտ, որտեղ սողոսկում էին երկու գետ, որ և հարաւային արևմտում անընդհատ ձգւում էին գէտի Բաղէշ (Բիսլիս): Ժօրէրի, հայ Ներսէս Սարգսեանի, Օրիէմայի, Լոփտուսի և Ատրեկէրի ժողոված տեղեկութիւնները ցեն թողնում ոչ մի կասկած այն մեծամեծ վախոխութիւնների մասին, որ կրել է այս ներքին ծովի մակերեւոյթը: 1838-ից մինչեւ 1840 թ. բարձրացաւ

1) Fanshawe Tezer, Turkish Armenia and Eastern Asia Minor.

2) Monteith, Journal; — Carl Ritter, Asien, vol. IX.

3) Millingen, արդէն յիշուած:

նա 3—4 մետր։ Ափի բնակիչները պատմեցին Կոֆտուսին՝ որ տասնեօթներորդ դարի սկզբին ջուրը բարձրացել էր նոյն ձեռով մի քանի տարի շարունակ և յետոյ նորից ցածացել։ Բացասիկ երաշտ տարիները կանգնեցնում են ջրերի յառաջադիմութիւնը, բայց ժամանակաւոր յետադիմութիւնից յետոյ ջրերն սկսում են աւելի մեծ ուժով աճել։ Ծովափի շատ լճերը ծածկուել են ալիքների տակ, նախկին թերակղզիները՝ այժմն ցամաքից անջատուած փոխարկուել են կղզիների, որոնք օրից օր աւելի եւս փոքրանում են։ Հիւսիսային ափովն անցնող ճանապարհը՝ սերունդից սերունդ ստիպուած են եղել տանել գէպի երկրի աւելի ներսը։ Արճէշ քաղաքը՝ որ գտնուում է հիւսիսարևելեան ծովախորշի ափում, գրեթէ ամբողջապէս անհետացել է ջրի տակ, իսկ Ագէլճիւազ գիւղաքաղաքը, որ աւազանի հիւսիսումն է, փանգի մէջ է ջրի յորդանալուց։ Նոյնպէս է և արևելեան ծովախում։ լիճը բարձրանում է գէպի վան քաղաքը, որը նոր է շինուած, հնագոյն վանը ջրի տակ մնացած լինելով։ Խակէլէ (նաւամատոյց) գիւղը մասամբ ամայացած է։ Նաւավարները իրենց մակոյիները կապում են ծառերի բներին, որոնք այժմն ափից հեռու գտնուում են ջրի մէջ։ Զրհորները լցուած են ծովից ծորուած ջրով, և տալիս են միայն աղտաղի հեղուկ։ Թերևս ծովի այս արշաւանքին պէտք է վերագրել ջրի տակ թաղուած մեծ քաղաքների մասին եղած աւանդութիւնները։ Ի՞նչն է այս յորդութեան պատճառը, երեսյթ, որ հակառակ է Ասիայի միւս գրեթէ բոլոր լճային աւաղաններում՝ նկատուածին։ Կամ տեղական մժնոլորտի հոսանքներն են ձգում այժմն աւելի շատ անձրևային տմպեր գէպի այս գաւառները, քան թէ այդ լինում էր առաջ, և կամ՝ պէտք է ընդունել ծովեղերեայ բնակիչների տուած մեկնութիւնը, այն է՝ որ ստորերկրեայ ճեղքուածները, որաեղով յորդառաս հոսանքներ սուզուելիս են եղել գէպի Տիգրիսի վերին օժանդակները այժմն մասամբ խափանուած պէտք է լինին, ուստի և լճի ջրամբարը՝ ստանալով ձիւներից և անձրևներից աւելի շատ հեղուկ, քան թէ գոլորշխացածը և ստորերկրեայ գուրս սուզուածը, աճում է և տարածւում, մինչեւ որ հաւասարակշռութիւնը վերահաստատուի և կամ ջրի

աւելցուկը հարաւարեմոքում ճանապարհ բանաց և թափուի բաղէցի գետակը: Բնիկների ասելով թափառական հովիւները գլորած են եղել մի մեծ քար ստորերկրեայ անցքերի մէկի ձագարի մէջ, — այդ անցքերը նման պէտք է լինին Յունաստանի լճերի հարավարեներին, — և այդ ժամանակից սկսած մակերեւոյթը բարձրանում է աստիճանաբար և անընդհատ: Շատ հետաքննական է մօտից վերաբննել տեղացիների հաւաստածը ստորերկրեայ վհերի խափանման մասին և նախ և առաջ տեսնել թէ այն աղբիւրները, որոնք համարւում են լճի սուզմունք, նմանում են արգեօք նրան իրենց աղի պարունակութեամբ: Վանից արեւելք մի ուրիշ ջրամբար՝ Արջակ լիճը մեծանում է նոյնպէս¹⁾: Այս երկու հարեւան լճերի միանուագ յորդութիւնը մեծ հաւանականութիւն է տալիս կիմայի փոփոխութեան: Արջակը նմանում է վան լճին նաև իւր աղային պարունակութեամբ, միայն թէ՝ ըստ Միլինգէնի՝ սա պարունակելիս պէտք է լինի նաև շատ մեծ քանակութիւն մինդեղի. սրա յորդութեան ջրերով ողողուած դաշտերը անբեր են դառնում երկար տարիներ(4):

Այսպէս կամ այնպէս, սակայն այն հաստատ է որ վան լճի ջրերը իրենց օժանդակների բերած աղը ամփոփելով, թէև ոչ այնչափ մեծ քանակութեամբ որչափ Աւրմիա լիճը, անըմպելի են դառնում թէ մարդկանց և թէ անասունների համար: Հախիրները գետաբերաններն են գնում ջուր խմելու, իսկ ձկնորսները իրենց ըմպելի ջրի պաշարը նորոգում են ծովի խորից դուրս ժայթքող մի աղբիւրից, որի ջրերը զեւում են մակերեւոյթի վրայ: Այս հայկական ծովի ջրերը այնչափ աղի չեն, որչափ Ատրապատականի լճինը և ձկների աւելի շատ տեսակներ ունին: Գետաբերաններում որսւում է մի տեսակ ձուկ՝ ահազին քանակութեամբ, որի մասին ժօրերը կարծում է սխալմամբ թէ նոյնը լինի, ինչ որ է Աւ ծովի անձրուկը (անշա, անշուա), որ այնչափ առատ է Տրաբիզոնի առաջ: Այս ձուկը սպիտուկի (փոքր սպիտակ ձուկ=able) մի տեսակն է՝ (տառեխ, cyprinus tarichi), ինչպէս որ այդ

1) Strecker, Mittheilungen von Petermann, № VII 1863.

որոշեց բնագէտ Դէյրոլլ: Այս էլ ովէտք է նկատել՝ որ այս ձուկը չէ կարող ապրել լճի աղի ջրերում¹⁾: Միմիայն մարտ ամսից մինչեւ մայիսի ոկտոբերը երեսում է նա ջրի վերին շերտերում, այն ժամանակ՝ երբ հալած ձների քաղցր ջրերը սփռւռում են լճի աղտաղի և ծանր ջրերի երեսին: Տարուայ մնացած միւս մասերում և ոչ մի տոռեխ չէ երեսում լճի մէջ: Բոլոր այն ձկները որոնք չեն գիշատուել անթիւ ջրագուաներից՝ ասպասան են գտնում օժանդակ վտակներում: Մի ժամանակ կարծում էին թէ տառեխը պահ է մանում ջրի խորքերում²⁾: Կաղիկի աւազանի ջուրը թէև քաղցր է, բայց այնտեղ նկատուած է ձկների նոյն՝ տարին մի անգամ՝ անհետանալլը³⁾: Վան և Արծակ լճերի աղային գիրտը, որ նստում է ծովափին, կիսով չափ ածխատ (կառքոնատ) է, կիսով չափ կալաքարի ծծմբատ (sulfate de soude), որը գործ են ածում աճառ շինելու և արտահանում են մինչեւ Ասորիք⁴⁾:

Վան լճի վրայ նաւերը սակաւաթիւ են, այսուամենայնիւ նորերս Տողէր ճանապարհորդը անցաւ այդ լիճը ձկնորսական նաւով և հինգ քեռնակիր լաստերով: Վանի ամերիկական քարողիշները 1879-ին ծովն իջեցրին մի կտործուն շոգենաւ, որի ամեն մի կտորը Պոլսից էր ուղարկուած ուղտով, բայց չէ երեսում որ այդ գործը յաջողուած լինի⁵⁾:

Վան, Անեան և Ուրմիո լճերի, Թիֆլիսի և Կարսի միջև՝ Ախալցիսայի բարձրաւանդակակութեան բազմաթիւ լճային գոգաւորութեանց գոյութիւնն արգեն իսկ ապացուցանում է այն առաւելութիւնը, որ հայկական բարձրաւանդակները ունին պարսկական

1) Ernest Chantre, Ճեռագիր: — Fanshawe Tozer, արգեն յիշուած:

2) A. Jaubert, Voyage en Arménie et en Perse; — Millingen, յիշուած:

3) Layard, յիշուած:

4) Deyrolle, Tour du Monde, 1-er Semestre, 1876.

5) Fanshawe Tozer, արգեն յիշուած:

բարձրաւանդակութեանց փրայ, լինելով աւելի խօնաւ (5): Ամբողջ Լազիստանը և այն լեռնագաւառը, որ նախնիքներից կրում էր Պոնտոս անունը, գտնւում են իսկապէս Սև ծովի ազգեցութեան տակ՝ ողերեւութաբանական տեսակէտից: Այդտեղում տիրում են արեւմտեան և հիւսիս-արեւմտեան հողմերը՝ բերելով առաստութեամբ ամառուայ փոթորիկների ժամանակ անձրւ, ձմեռ՝ ձիւն: Այդտեղում թափուող խոնաւութիւնը այնչափ մեծ չէ, որչափ կովկասի հարաւային կողերում, Մինգրէլիայում և Խմերէթումն է, ուր անձրւեի տարեկան շերտը անցնում է շուրջ մետրից, սակայն Լազիստանում կան յաջող զիրքով հովիտները ուր ամպերից թափում է մէկ մետրից աւելի անձրւային ջուր: Ամերիկական մի քարոզչի ասածին նայած՝ Բաղէշում եկած ձիւնի քանակութիւնը՝ Վան լճի հարաւային ափին իշխող լեռների հարաւային կողերի փրայ լինելու է 5 մետր և կէս 1858 և 1859 թուականների ձմեռները: Այս ձիւնի թանձրութիւնը հաւասար է 40 հարիւրամետրից աւելի ջրի: Թէ և ոչ մի ծշգրիտ հետախուզութիւն թոյլ չէ տալիս զրապէս սնդելու, սակայն Հայաստանի բարձրաւանդակութեանց տարեբոլոր ընդունած խոնաւութեան միջին քանակութիւնը կարելի է կէս մետրաչափ համարել:

Կան գաւառներ, ինչպէս օրինակ Ոլթու (Ուխտիք) բարձրաւանդակը, որոնց բարձր լեռները իբրև պատուար են խոնաւ հողմերի գէմ, գաւառներ, որոնք հազիւ են տանում իրենց մշակութեան համար կարեւոր եղած անձրւները: Այսպիսի տեղերում պէտք է լինում առուներ վերառնել և ճիւղաւորել նրանց մշակուած հողերում հազարաւոր ակօններով ինչպէս այդ անւում է Անգրիովկասի կասպեան աւազանի սահմանում գտնուած գաւառներում: Բայց հարաւային Հայաստանի մեծագոյն մասը չնայած պօնտական ալպերի պատուարին, գտնւում է արեւմտեան անձրւաբեր հոսանքների ազգեցութեան տակ որոնք ծովից փչում են գէպի Արւազի բարձրաւանդակը և յետոյ ներս են թափանցում գէպի արեւմտեան՝ ձագարածե բացուած հովիտները: Այսպիսով Սև ջրի ամբողջ վերին հովիտը՝ կրզրումի աւազանի հետ միասին ընդունում են Սև ծովի քամիները: Այս քամիները փչում են գլխաւորապէս

ձմեռը և ծածկում են թանձր ձիւնով Եփրատի ակունքների շուրջը լեռների ամփիթատրոնը։ Ամառը՝ հիւսիսի և արևելքի քամիները, որոնք ասիական մայրցամաքը անցնող բնեռուային մեծ հոսանքի ձիւղաւորութիւնն են, բերում են չոր օդ, որից ցրւում են ամպերը։ Բայց պատահում է նոյնպէս որ արևմտառքից եկող յանկարծական փոթորիկները փոխւում են կատաղի տեղատարափ անձրեների։ Միւս կողմից՝ Միջերկրականի ուզարկած հողմերը բերում են իրենց բաժին խոնաւութիւնը և ընդհարուելով պատառում են իրենց թուխըերը զառիվերների վրայ։ Գեղեցիկ եղանակին մինչև անգամ մի թեթև մշուշը մեղմում է լեռների գծագրութիւնը և գունաւորում է գաշտանկարները նուրբ երանգներով¹⁾։ Հայկական ալպերի հիւսիսային կողերի վրայ իջած խոնաւութիւնը վերագառնում է ձորոխ և Քարշուտ գետերը, որոնց ջրի ծաւալը շատ մեծ է Համեմատած իրենց աւազանին։ Նոյն լեռների հարաւային կողերի վրայ սկիզբն են առնում Եփրատն ու Տիգրիսը, որոնց ալիքները միանալով Շատ-Էլ-Արարում՝ գերազանցում են բոլոր միւս գետերին, որոնք գտնուում են ինդոսի և Պանուբի միջև, և մինչեւ խակ երկու անգամ աւելի են Նեղոսից։ Մթնոլորտային և գետային շրջանառութեամբ Աւ ծովը իւր անձրեներով և Եփրատը իւր հոսանքով անընել 25 աստիճանից²⁾։ Թուրքական Հայաստանի բնակիչները նեղւում են փոփոխակի սաստիկ ցրտից և սարսափելի շոգե-

Եւքսինեան Պոնտոսի ափում քաղաքները վայելում են բաւական քաղցր և բարեխառն օդ։ Շատ հազիւ է պատահում որ այդ ծովափի ցրաերը և աստիճան ցած իջնեն սառուցման կէտից, իսկ ծովի բարեխառնով ազգեցութիւնը արգելում է ամառնային շոգերին անցնել 25 աստիճանից²⁾։ Թուրքական Հայաստանի բնակիչները նեղւում են փոփոխակի սաստիկ ցրտից և սարսափելի շոգե-

1) Radde, Извѣстія Кавказскаго Отдѣла, 1878.

2) Տրաբիզոնի կլիման զանազան եղանակներում, 6 տարուայ հետախուզութեանց համեմատ. 6°8 յունուարին, 24°3 օգոստոսին, 15°5 տարեբոլոր Ամիսների ծայրայեղութիւնները, 29°9 — 2°6. Անձրկ՝ 566 հազարամետր:

(Hann, Behm's Jahrbuch, IX, 1882.)

րից գանուելով տարուայ կլիմայի ծայրայեզութիւնները մեղմող ծովից հեռու է կրպումում գարուն չկայ, այնաեղ ձմեռուայ ձիւները մի քանի օրուայ մէջ հալում են՝ փոխարկելով հեղեղատները լայնածաւալ գետերի։ Ծայրացեղ կետերը տարուայ ամենաշոգ և ամենացուրտ օրուայ են՝ 25 և + 44 աստիճան։ Երկարատեղնութիւններով միայն կարելի կլիմայի հաստատապէս համեմատել այս կլիման Եւրոպայի և Ասիայի կլիմաների հետ, որոնք արդէն լաւ ծանօթ են օգերեալութաբանական տեսակէտից¹⁾։ Այստեղում տեսնուած է 33 աստիճան տարբերութիւն արշալոյսի և կէսօրուայ մէջ²⁾ զմեռնային սառնամանիքը, գարնանային եղեամները ուշացնում են բուսականութիւնը, բայց ամառը բոյսերը արագութեամբ են աճում և հասունանուած բնութիւնը կարծես պայմանին է գործում մայիս և յունիս տմիսներին։ Յորենը անցնում է իւր աճեցողութեան բոլոր տատիճանները՝ սկսած տերեւաւորութիւնից մինչև հասունութիւնը՝ երկու ամառայ ընթացքում։ Բայց ամառնային արեգակը կկիզէր նրան ծաղկած ժամանակ, եթէ ջրաքաշխական առուակները հարկաւոր եղած խոնաւութիւնը չմասակարարէին։ Մինչև 1800 մետր բարձրութեան վրայ մշակում են ցորեն և 2100 մետրի վրայ գեռ տեսնուում է գարին, թէև ոյս բարձրութեան վրայ ցանքսերին սպառնում է սառնամանիքների յանկարծական վերագարձը աշնան սկիզբներին։ Միջին թուով հայկական լեռներում մշակութեան շերտը չէ այնչափ բարձր, որչափ վրաստանում, կովկասի զառիվերների վրայ, թէև վերջինս տեղի հիւսիսումն է գտնուում։ Դրա սպառնառը հաւանականաբար լեռների ձևն է։ Մինչդեռ Հայաստանի լեռները իրենց բազմաթիւ խրամատներով թոյլ են տալիս հիւսիսային քամուն ներս մտնելու, կովկաս սարերի միապատճաղ պատուարը պաշտպանում է իւր հա-

1) Երզրումի կլիման զանազան եղանակներին (1987 մետր բարձր)։

Ճմեռ գարուն ամառ աշուն տարերողոր
Քսան Զիւաշեկի (3 տարի). — 10,°8 9,°9 24,°3 10,°3 8,°45

» Մալամայի (3 տարի). — 4° 10,°8 24,°2 7,°9 9,°72

2) Malama, Vilayet d'Erzeroum (ռուսերէն); — Radde, արդէն յիշուած։

բաւային կողերի վրայ աճող բուսականութիւնը: Բուսական գոտիները իրար են խառնուում տեղական կլիմայի համեմատ: Այսպէս՝ Վանի դաշտերում դեռ աճում է նարնջենին և կիսրոնենին, մինչդեռ ձիթենին այնտեղ չէ կարող ապրել¹⁾): Ֆրանսիայում ձիթենու գոտին ընդհակառակն այդ բոլորից աւելի շատ է բարձրանում դէպի հիւսիս:

Սև ծովի մօտերը պօնտական բուսականութիւնը նման է Մինդրէլիայի բուսականութեան, առանց հաւասարուելու նրան իւր տեսակների ձոխութեամբ և գոյների վայլով²⁾): Հայաստանը Փոքր Ասիայի այն երկիրներից մէկն է, ուր պաղատու ծառերը տալիս են ամենահամեղ միրգ և ուր բուսաբանները կարծում են գոած լինել շատ տեսակների հայրենիքը, ինչպէս օրինակ՝ խաղողի որթի և տանձենունը: «Լազիատանը, ասում են ընիկները, պատւղների հայրենիքն է»³⁾): Ասիական թուրքիայում չկայ մի ուրիշ երկիր աւելի կանաչագեղ, քան Տրաքիզոնի շրջականը: Ոտքից գլուխ բլուրները ծածկուած են բուսական հողով: Պատնէշների վրայ յեցուած աստիճանաւոր դարաստավները զարգարուած են կանաչ պարտէզներով, մարգագետիններով, մշտառերև կամ տերեւփոխիկ ծառերով: Կիսրոնենիները, ձիթենիները շրջապատում են ծալափի քաղաքներն ու գիւղերը: Աւելի բարձրում երեւում են սոսուարանիւղ ընկուղենիներ, շագանակենիներ, կաղնիներ: Աւելի հեռուն՝ բացուած լեռնավարգերը (ազալէ) և մշտագալար միտավարդերը (rhododendron) կարծես կարմիր սփուզներ լինին լեռների զառիվայրերի վրայ փռուած: Լեռնավարդի ծաղիկներին են վերագրում մեղրի այն թիւնաւոր յատկութիւնը, որ գինովացրեց և գժուացրեց Քսենոփոնի զինուորներին: Կոփ բուսաբանը վկարողացաւ այս մեղրից գտնել կովկասեան երկրներում, սակայն այդ մեղրը ծախուում է բաթումի և օրլուի միջև եղած պօնդական ծովալիի բոլոր վաճա-

1) Statkovskiy, Problèmes de la climatologie du Caucase.

2) A. Jaubert; — Carl Ritter, Asien, vol. X.

3) Koch. Wanderungen in Orient; Carl Ritter, Asien, vol. XVIII.

ռանոցներում։ Յնիկները եփում են նրան և շաքարի հետ խռո-
նում՝ անդնաս դարձնելու։ Համար 1):

Հայաստանի սարերը երկրի ներսում գրեթէ բոլորն էլ զրկուած
են ծառային բուսականութիւնից։ մարդ տեսնում է միմիայն
ժայռեր և արօտներ։ Այս երկրում՝ որ կարող էր նորից ծածկուել
անտառներով, շատ տեղերում ուրիշ վառելիք չունին բացի կովի
աթարից։ Թուչունները սակաւ են, բացի նրանցից, որոնք բուն են
դնում ժայռերի ճեղքերում։ Վայրի կենդանիները, որոնք պատ-
կանում են նոյն տեսակներին, ինչ որ կան Անդրկովկասի սարե-
րում, այս լերկ և արօտապատ տարածութեանց լրայ ապառանի
տեղ չեն գտնում։ Լեռների բոլոր կողերին տիրում են հովիւնները
և նրանց մէծագմակ ոչխարհները, պահպանուած կիսավայրենի
շներով, որոնք յաճախ աւելի վտանգաւոր են քան թէ արջերն ու
գայլերը։ Անտի—կովկասի և Պանտոսի մարգագետիններում արա-
ծող ձիերը գեղեցիկ ցեղից են, բայց չեն հաւասարուում թիւրքմէն
ձիերին իրենց ուժովիք, և ոչ էլ պարսկականներին՝ իրենց շնոր-
հալի շարծուաժքներովը։ թէև սաստիկ կրակու, սակայն չափա-
զանց քաղցրաբարոյ են։ Այս էլ կայ, որ քուրզերը, ինչպէս նաև
Փոքր Ասիայի ու Հայաստանի միւս բնակիչների մէծ մասը, աւելի
լաւ են համարում վարել իրենց անասունները ձայնով, քան թէ
մորակով։ Մայլը քաշող գոմէցը առաջնորդուում է երգով, երբ որ
սայլորդը լրում է՝ կենդանին կանգնում է 2)։ Օդի աւելի մեծ
խոնաւութեան և աղբիւրների առատութեան պատճառով՝ Հայաս-
տանի արօտները աւելի խոտաւէտ են քան Պարսկաստանինը և
սնուցանում են միլիոնաւոր անասուններ, որոնք իրրև կերակուր
են ծառայում կրտսանդնուալումին և Փոքր Ասիայի բազմաթիւ
քաղաքներին։ Միլիոնգէնը կարծում է որ Արարատի և Պարսկա-

1). Hamilton, Researches in Asia Minor;—Zeitschrift der Gesellschaft für allgemeine Erdkunde, Band IV;—Mahé, Géographie médicale, Dictionnaire encyclopédique des sciences médicales.

2) Millingen, Wild Life among the Koords.

կան ջողի միջև եղած արօտառելիների Շաոյ ցրաւած ոչխարհերի թիւը պակաս չէ՝ 40 միլիոնից։ Դարիս սկիզբում ձօրերը 150 հազար էր հաշւում ոչխարհերի թիւը, որ տարեկան ստանում էր կոստանդնուպոլիսը Հայաստանի սարերից։ Հազար հինգ հարիւր-երկու հազար գլխով ճանապարհ էին ընկնում ոչխարհերի հօտերը, անցնելով գարեանդիյ գարեւանդ՝ մշապես հետեւելով արօտառելիների գոտուն և հասնում էին Վասիլիքին ճանապարհ գուրս գալուց 17 կամ 18 ամիս յետոյ։ Հողեպը, Դամակասը, մինչեւ անգամ Բէյրութը իրենց մօի պաշարն ստանում են Հայաստանի և Քուրդիստանի հովիւներից, իսկ պատերազմների ժամանակ թուրք բանակները ուստեսակ պաշարի կումից սփռագ-ջաղես կախուած են Վերին Եփրամի ընակիւներից⁴⁾։

(Կը շարունակուի)։